**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3**
**« 11 » մարտ 2020թ.-ին կնքված N «ՎԱԿՏՄ-ՀՄԱԾՁԲ-20/7-1» ծածկագրով՝**
**Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման**
**պետական գնման պայմանագրի**

ք.Երևան «27» 01 2021թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ (թիվ 00229/20 լիազորագիր տրված 07.12.2020թ.-ին) Կարեն Ասատուրյանի (նույնականացման քարտ 000509638, տրված 11.02.2013թ., 004-ի կողմից), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, և Կրթության տեսչական մարմինը, ի դեմս մարմնի ղեկավար Ա. Ծագաֆյանի (այսուհետ՝ Ծառայություն ստացող), որը գործում է մարմնի կանոնադրության հիման վրա, բոլորը միասին՝ կողմեր հիմք ընդունելով «**ՎԱԿՏՄ-ՀՄԱԾՁԲ-20/7-1**» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## *1. Համաձայնագրի առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ 2021թ. պետական բյուջեով համապատասխան ծառայությունների մատուցման նպատակով հատկացվել է 800000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել ֆինանսական պարտավորությունները և վճարման ժամանակացույցը՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2021թ-ի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 2021թ-ի դեկտեմբերի 31-ը:

## *2. Այլ պայմաններ*

2.1 Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ | ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ |
|---|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011024081<br>ՀՎՀՀ 02505554 | «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ<br>ք. Երևան, Ազատության 24/1<br>«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ<br>ՀՀ 163004038879<br>ՀՎՀՀ 02500052 | Կրթության տեսչական մարմին<br>ք.Երևան 0051, Կոմիտաս 37/4<br>ՀՎՀՀ 00196177 |
| (ստորագրություն)<br>Կ.Տ. | (ստորագրություն)<br>Կ.Տ. | (ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված **N 1**
« *11* » մարտի **2020**թ. կնքված
**«ՎԱԿՏՄ-ՀՄԱԾՁԲ-20/7-1»** ծածկագրով պայմանագրի
« *27* » *01* **2021**թ. կնքված **N 3** Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել **2021** թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | **64211100-1** | Հանրային հեռախոսային ծառայություններ | **144000** | **144000** | **144000** | **320000** | **320000** | **320000** | **480000** | **480000** | **480000** | **800000** | **800000** | **800000** | **800000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
** *վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024081
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
ք. Երևան, Ազատության 24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163004038879
ՀՎՀՀ 02500052

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ**

Կրթության տեսչական մարմին
ք.Երևան **0051**, Կոմիտաս **37/4**
ՀՎՀՀ **00196177**

(ստորագրություն)
Կ.Տ.